



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀԸՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«29» 08 2016թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 70

Ձեռնարկողը՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ

Ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝

**Ռանչպար գյուղական համայնքի /բնակավայրի/
պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվեքվություն**

<< Արարարի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

դուրս են գալիս երկրի մակերևույթ՝ առաջացնելով ճահճային հողամասեր: Ջրերը բետոնի նկատմամբ հանդիսանում են ոչ ագրեսիվ:

Տարածքում տիրապետում են բաց շագանակագույն, գորշ, ավալացված, տեղ-տեղ աղակալած կիսաանապատային հողերը: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Գյուղացիական ընտանիքները զբաղվում են բանջարաբուստանային կուլտուրաների մշակմամբ, սեփական հողատարածքներում աճեցվում են բանջարանոցային, հացահատիկային և այլ մշակաբույսեր: Վերջին տարիներին բնակչությունը զբաղվում է նաև անասնապահությամբ, ձկնաբուծությամբ: Համայնքի հարավ արևելյան ծայրամասում, մոտ 10 հա մակերեսով տարածքում իրականացվում ավազի արդյունահանման աշխատանքներ, առկա են դեպի հանքավայր տանող գրունտային ճանապարհները:

Ռանչպար համայնքի բնակչության թվաքանակը ներկայումս կազմում է 1.650 հազ. մարդ, իսկ հաշվարկային ժամանակահատվածի համար ընդունվել է 2063 մարդ՝ հաշվի առնելով բնակավայրի տարածական ռեսուրսային պոտենցիալը:

Տարածքի համալիր գնահատականը տրվել է տեղանքի բնակլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ և համարվում է բարենպաստ:

Ներկայումս Ռանչպար համայնքում մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները չեն գերազանցում բնակելի գոտու համար սահմանված թույլատրելի նորմերը և համայնքի օդային ավազանը հիգիենիկ վիճակով գնահատվում է բարենպաստ: Մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝ ավազի հանքավայրերը, ավտոտրանսպորտը և ջեռուցման ժամանակահատվածում օգտագործվող վառարանները: Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 1249.28 հա, մթնոլորտ արտանետումների ընդհանուր քանակը կազմում է 43.57 տ/տարի: Ընդհանուր տնտեսական վնասը մթնոլորտի աղտոտումից կազմում է տարեկան ~3.9 մլն. դրամ:

Ներկայումս համայնքի ջրամատակարարումն իրականացվում է բնակավայրի տարածքում գործող 13 խորքային ինքնաշատրվանող հորերից, բնակչությունն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: Ընդհանուր ջրօգտագործումը կազմում է 434 մ³/օր, կամ 158.4 հազ. մ³/օր: Խմելու, տնտեսական և արտադրական կարիքների համար բնակավայրին ջուր է տրվում ջրամատակարարման մեկ համակարգով: Բնակավայրի զգալի մասում առկա է մետաղական խողովակներից բաղկացած ջրամատակարարման բաշխիչ ցանց:

Ռանչպար համայնքը կոյուղացված չէ: Բնակչության տնտեսակենցաղային, առևտրային և արդյունաբերական կազմակերպություններից հոսքաջրերը, որոնց ընդհանուր քանակը կազմում է 230 մ³/օր, կամ 83950 մ³/տարի, լցվում են համայնքի վարչական տարածքով հոսող Սև ջուր գետ:

Տարածքը ինչպես մակերևույթային, այնպես էլ ստորգետնյա ջրերի իրավիճակով բնութագրվում է սահմանափակ բարենպաստ, քանի որ Սև ջուր գետը տարածքի սահման է մտնում զգալիորեն աղտոտված: Գետի աղտոտվածությունը հիմնականում պայմանավորված է դեպի վեր գտնվող բնակավայրերում մաքրման կայանների բացակայությամբ, որոնց հոսքաջրերն առանց մաքրվելու թափվում են ջրանցքների մեջ, այնուհետև Հրազդան գետ:

Ներկայումս Ռանչպար գյուղում հեղեղատար կոյուղի չկա: Գյուղի տարածքից անձրևաջրերի արտահոսքն իրականացվում է անկանոն, բնական թեքության հաշվին՝ մի մասը ներծծվում է հողի մեջ, իսկ մնացած մասն անկանոն թափվում է Հրազդան գետ:

Ռանչպար բնակավայրում տնամերձերը և գյուղատնտեսական հողերը ներկա դրությամբ ոռոգվում են (ելքը 600լ/վրկ) Հրազդան գետից սկիզբ առնող բետոնյա հունով և այլ ջրանցքներով: Նախատեսվում է հեռանկարում բարելավել ոռոգման ցանցը բետոնե կիսախողովակներով:

Ներկա իրավիճակում Ռանչպար գյուղում արդյունաբերական ձեռնարկություններ չկան, այդ իսկ պատճառով արդյունաբերական թափոնները բացակայում են: Համայնքի աղբահանությունն իրականացվում է կանոնավոր կերպով՝ շաբաթյա ժամանակացույցով աղբը տեղափոխվում է Մասիս քաղաքի աղբավայր:

Գյուղն ունի երեք գերեզմանատուն, որոնք զբաղեցնում են 3.06 հա տարածք և բավարարում է բնակչության հեռանկարային պահանջը:

Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքներում, բնակչության սեփական հողատարածքներում աճեցվում են բանջարանոցային, հացահատիկային և այլ մշակաբույսեր: Համայնքում ընդհանուր օգտագործման կանաչ և կանաչ գոտի, տնկարկ-ներ (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) գրեթե գոյություն չունեն:

Համայնքի վարչական տարածքը զբաղեցնում է 1249.28 հա մակերես, իսկ նախագծով՝ 1249.28 հա է, որից բնակավայրի հողերը կազմում են՝ 121.49 հա, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 771.99 հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական ձեռնարկությունների զբաղեցրած հողատեսքերը՝ 85.87 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 6.85 հա, ջրային հողերը՝ 155.42 հա և հատուկ նշանակության հողերը՝ 104.6 հա (2006 թ. տվյալներով): Հատուկ պահպանվող տարածքների հողեր համայնքի հողային հաշվեկշռում չկան:

Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղություններն են՝ տրանսպորտային, ինժեներական ենթակառուցվածքների կատարելագործում /նոր հանգույցների ստեղծմամբ/ և զարգացում, այգեգործություն, դաշտավարություն, անասնապահություն, գյուղատնտեսական մթերքների վերամշակում, բանջարաբուծություն, ձկնաբուծություն, թեթև արդյունաբերություն, ռեկրեացիայի կազմակերպում: Համայնքի հեռանկարային զարգացման համար օգտագործվում է հատուկ այդ նպատակի համար պահուստավորված գյուղի արևելյան հատվածում տեղակայված տարածքը: Հատակագծային կառուցվածքի կանոնակարգման նպատակով կատարվել են մի շարք հողատեսքերի նպատակային նշանակության փոփոխություններ, որը ներկայացվում է ստորև.

Տարածքը		փաստացի	նախագծային
Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը	հա	1249.28	1249.28
ընդամենը, այդ թվում՝			
Բնակավայրի հողեր, որից.	հա	1121.49	133.273
բնակելի կառուցապատման	- " -	99.5	107.658
հասարակական կառուցապատման	- " -	3.95	3.95
խառը կառուցապատման	- " -		1.45
Ընդհանուր օգտագործման հողեր, այդ թվում.	- " -	15.10	17.235
ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	- " -	-	0.195
Այլ հողեր	- " -	2.94	2.94
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	- " -	85.87	104.92

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից	-"-	6.85	7.7
Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից	-"-	3.06	7.61
Հանգստի համար նախատեսված	-"-	-	4.55
Պատմական և մշակութային	-"-	3.06	3.06
Հատուկ նշանակության	-"-	-	-
Գյուղատնտեսական նշանակության հողեր	-"-	771.99	735.775
Անտառային հողեր	-"-	-	-
Զբային հողեր	-"-	155.42	155.42
	-"-	-	-

Բնակավայրի տարածքի կառուցապատումը ներկայացված է բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների ինչպես կենտրոնացած, այնպես էլ ցրված տեղակայմամբ: Կառուցապատման զգալի մասը կենտրոնացած է գլխավոր մայրուղուն զուգահեռ շերտերում՝ գետի ափամերձ հատվածից որոշակիորեն հեռացված գյուղատնտեսական նշանակության շերտերով: Հաշվի առնելով գյուղում կանաչ տարածքների գրեթե բացակայությունը բնակավայրի հարավային հատվածում, գետի ափամերձ մասում՝ գյուղատնտեսական այլ հողատեսքերով ներկայացված տարածքում նախատեսվում է հանգստի-ռեկրեացիոն գոտու կազմակերպում՝ ժամանցի օբյեկտներով, խաղահրապարակներով և խաղասրահներով: Տարածքի սպորտային ենթակառուցվածքով չզբաղեցված հատվածները նախատեսվում է կանաչապատել՝ տարածքի եզրագծով իրականացնելով ծառատնկումներ, իսկ բուն տարածքում՝ կանաչ սիզամարգերի, դեկորատիվ ծառաթփային տեսականու միջոցով՝ ձևավորելով միկրոկլիմայական բարենպաստ պայմաններ ստեղծելուն միտված միջավայր:

Հեռանկարում նախատեսվող գործունեությունների արդյունքում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արդյունաբերական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտը, էներգետիկայի օբյեկտները և ջեռուցման համակարգերը, որոնցից մթնոլորտ վնասաակար արտանետումները տարեկան կկազմեն մոտ 5.6տ: Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին, ընդհանուր տնտեսական վնասը բոլոր տեսակ արտանետումներից կկազմի տարեկան մոտ 4.1 մլն դրամ: Մթնոլորտային օդի պահպանության նպատակներով առաջնահերթ նախատեսված են տեխնոլոգիական և սանիտարա-տեխնիկական բնույթի հետևյալ միջոցառումները.

- Արդյունաբերական ձեռնարկությունների ներդրմանը զուգընթաց տեխնոլոգիական հոսքագծերի և սանիտարա-տեխնիկական սարքավորումների արդիականացում,
- մթնոլորտի աղտոտվածության դիտարկման և վերահսկման համակարգի կատարելագործում,
- ճանապարհների ծածկույթի բարելավում,
- ավտոմեքենաների տեխնիկական վիճակի, ինչպես նաև ծխագազերի չեզոքացման մուտքերի վրա վերահսկման ուժեղացում և վառելանյութի որակի վերահսկում,
- ավտոճանապարհների եզրագծով ծառատնկման աշխատանքների իրականացում՝ ավտոտրանսպորտի արտանետումների վնասակար ազդեցության նվազեցման համար
- ձեռնարկություններում գազի այրման լավացված ռեժիմով և բարձր ՕԳԳ-ով ժամանակակից կաթսայատների գործարկում:

Ըստ կատարված հաշվարկների՝ Ռանչպար համայնքի հեռանկարային ջրապահանջը կկազմի մոտ 500 մ³/օր (5.5 լ/վրկ): Ջրամատակարարման համակարգը նախատեսվում է կենտրոնացված՝ բնակչության խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջների իրականացում մեկ ջրատարով:

Ներկայումս Ռանչպար համայնքը կոյուղացված չէ: Ներկայումս բնակչությունն օգտվում են հորատիպ բակային զուգարաններից: Ստորգետնյա ջրերն աղտոտումից գերծ պահելու նպատակով սույն հատակագծով նախատեսվում է ամբողջովին կոյուղացնել համայնքը: Ըստ կատարված նախնական հաշվարկների, բնակավայրի հեռացման ենթակա կենցաղային և արտադրական կեղտաջրերի միջին օրական քանակը հեռանկարային ժամանակաշրջանի համար կկազմի մոտ 350 մ³/օր: Հաշվի առնելով բնակավայրի ռելիեֆային պայմանները, ինչպես նաև գետի երկու կողմերում տեղակայված լինելը, նպատակահարմար է կենցաղային հոսքաջրերի մաքրման համար նախատեսել երկու մաքրման սարքավորումներ: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը դեպի նախատեսվող մաքրման կայան (որտեղ դրանք կենթարկվեն լրիվ կենսաբանական մաքրման) կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների միջոցով, որոնք միանալով թաղամասերի ամենացածր մասով անցնող փողոցային կոլեկտորներին, կմիացվեն գլխավոր կոլեկտորին, որն էլ հոսքաջրերը կտեղափոխի մաքրման կայան:

Սույն հատակագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և ենթարկել մաքրման՝ նախատեսելով կարգավորող ջրավազաններ: Նախագծային առաջարկությունները ներառում են.

- Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման կազմակերպում, ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով
- Ջրամատակարարման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ) սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) և 2-րդ գոտիների սահմանում
- Ջրամատակարարման բոլոր գլխամասային կառույցներում խմելու ջրի վարակազերծում՝ սահմանված կարգով (քլորացում) և լաբորատոր հսկողություն
- Բնակավայրի կոյուղացում, կոյուղատարների և գլխավոր կոլեկտորների նախատեսում
- Կոյուղու կենսաբանական մաքրման 2 կայանների (յուրաքանչյուրը 250 մ³ հզորությամբ) նախատեսում /կոյուղու կեղտաջրերի լրիվ մաքրում և վարակազերծում՝ ապահովելով՝ $\text{ԹԿՊլրիվ}=6 \text{ մգ/լ ցուցանիշը}$:

Բնակչության աճի հետ մեկտեղ հեռանկարում կավելանա նաև կոշտ կենցաղային թափոնների քանակը՝ տարեկան կազմելով 413 տ: Արդյունաբերական թափոնները բացակայում են:

Շրջակա միջավայրի վրա թափոնների վնասակար ազդեցության մեղմացման և կանխարգելման համար անհրաժեշտ է՝ կենցաղային թափոնների տեղափոխման շարժական և տեխնիկական սարքավորումների նորացումը, լքված աղբավայրում աղբի հարթեցման և հողով ծածկման աշխատանքների իրականացումը:

Հեռանկարում համայնքի զարգացման տեմպերի հետ հողի աղտոտման հիմնական աղբյուրներ կմնան գյուղմթերքների, վերամշակման ձեռնարկությունների մթնոլորտային արտանետումների ու կենցաղային թափոնների աղբավայրերը, հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում:

Ավագահանքի շահագործման ընթացքում մակերևութային հոսքով և անձրևաջրերով լվացումները կանխելու նպատակով նախատեսված է ժամանակավոր և մշտական ջրահեռացման համակարգ, իսկ ամբողջական շահագործումից հետո տարածքները ամբողջովին համահարթեցնել, ծածկել բուսաշերտով, կանաչապատել:

Ներկա դրությամբ Ռանչպար գյուղական համայնքում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներ (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) գոյություն չունեն, սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կազմում է 116.415 հա:

Հեռանկարային բնակչության պահանջը ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նկատմամբ կկազմի 0.195 հա՝ որպես հանրային օգտագործման կանաչ գոտի: Այն ստեղծվելու է գետի ափամերձ հատվածում, ներառելու է զբոսայգի՝ ժամանցի հաստատություններով և խաղասրահներով:

Ռանչպար գյուղական համայնքի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար առաջարկվել է գործողությունների համալիր ծրագիր, որը պարունակում են նոր տարածքների կանաչապատման, ոռոգման համակարգի զարգացման և բարելավման, կոշտ կենցաղային թափոններով աղտոտված տարածքների, խախտված լանդշաֆտով հողակտորների և սանիտարական գոտիների տարածքների մաքրման և վերականգնման և կանաչապատման միջոցառումները:

Ռանչպար գյուղի գլխավոր հատակագծի կազմում ներառվել է բնակավայրի տարածքների գոտիավորման նախագիծը, որի դրույթները, պահանջները և նորմերը կանոնակարգում են կառուցապատման գործունեությունները, ինչը անմիջականորեն ազդում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, որոշում կառուցապատման խտությունը, հողամասերի օգտագործման ինտենսիվությունը և այլ գործոններ:

Փորձաքննական պահանջ

Հիմնադրությային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայնախագիծ» ԲԲԸ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Ռանչպար գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:



Մասնագետ՝

Հ. Մկրտչյան